ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԲՈՂՈՔՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ՖԵՐՄԵՐՆԵՐԸ. ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

DOI: 10.52174/2579-2989_2024.2-29

Հիմնաբառեր. *ֆերմերներ, դժգոհություն, «կանաչ գործարք», ներկրման արտոնություններ, պետական աջակցություն*

Եվրամիության բազմաթիվ երկրներում 2024 թվականը սկսվեց ֆերմերների դժգոհություններով: Դեռևս հունվարին բուռն թափով բողոքի ալիք բարձրացրին Գերմանիայի, Ֆրանսիայի և Լեհաստանի ֆերմերները: Հետագայում նրանց միացան այլ երկրներից: Առիթ էին դարձել Ուկրաինայից և Լատինական Ամերիկայից արտոնյալ պայմաններով ներկրվող գյուղատնտեսական արտադրանքները, մինչդեռ բուն պատճառն ավելի խորքային էր՝ ԵՄ կնքած «կանաչ գործարքը»: Դեռևս 2019 թվականի դեկտեմբերի 11-ին Եվրահանձնաժողովն ընդունել էր Եվրոպական «կանաչ գործարքի» (EGD) գործողությունների ծրագիրը, որի հիմնական նպատակը մինչև 2050 թվականը կլիմայական չեզոքությանն անցում կատարելն է: Այսինքն, ի թիվս այլ նպատակների, պետք է հասնել այն հանգրվանին, որ ջերմոցային գազերի արտանետումները հավասարվեն բնական էկոհամակարգերի կողմից դրանց կլանմանը, և տնտեսական աճն այլևս չպետք է կապել օգտագործվող ռեսուրսների ավելացման հետ: Սակայն, որոշ երկրներում ֆերմերների պահանջների շրջանակն ավելի լայն է:

Հայաստանի Հանրապետությունում գնալով ակտիվանում է Եվրամիությանը մերձենալու գործընթացը, ուստի կարևոր է բազմակողմանիորեն դիտարկել ԵՄ երկրներում ծավալվող հասարակական և տնտեսական գործընթացները:

Սամվել ԱՎԵՏԻՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1978 թ. գերազանցությամբ ավարտել է ՀԳԻ տնտեսագիտական ֆակուլտետը, աշխատել արտադրությունում և սովորել ասպիրանտուրայում: 1990 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2003 թ.՝ դոկտորի գիտական աստիճան, 2007 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999 թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր: 2002-2011 թթ. աշխատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ: 2013 թ.-ից աշխատում է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում, նախ՝ զբաղեցնելով տնօրենի և սոցիալ-տնտեսական ծրագրերի համակարգողի, ապա 2016 թ.-ից՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագրի տնօրենի պաշտոնները: Ներկայում նույն կենտրոնի ավագ փորձագետ է:

Հեղինակ է շուրջ 170 գիտական հոդվածների, 21 մենագրությունների և ուսումնական ձեռնարկների:

https://orcid.org/0000-0002-3019-4075

Եվրոպայում ֆերմերների դժգոհությունները նոր երևույթ չեն, սակայն վերջին շրջանում դրանք ավելի մեծ թափ են ստացել՝ դրսևորվելով բուռն

ընդվզումներով: Օրինակ՝ 2019 թվականին, երբ ազոտի օքսիդների արտանետումները սահմանափակելու նպատակով Նիդերլանդների խորհրդարանն առաջարկեց երկրում կիսով չափ կրճատել անասունների գլխաքանակը, ֆերմերների արձագանքը չուշացավ, և հազարավոր ցուցարարներ ողողեցին Ամստերդամի փողոցները:

Այսօր ֆերմերային անկարգություններ են մոլեգնում Գերմանիայում, Լեհաստանում, Հունաստանում, Սլովակիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում, Հունգարիայում, Ռումինիայում, Իտալիայում, Չեխիայում, Լիտվայում, Լատվիայում, Բելգիայում, Նիդերլանդներում և այլ երկրներում: Այս դժգոհությունների համար առիթ են դարձել Ուկրաինայից և Լատինական Ամերիկայից արտոնյալ պայմաններով ներկրվող գյուղատնտեսական արտադրանքները: Սակայն, պարզունակ կլիներ ընդվզումը կապել միայն դեպի հսկայական եվրոպական շուկա Ուկրաինայից էժան սննդամթերքի ներհոսքի հետ: Դա պայմանավորված է նաև այլ հանգամանքներով՝ եվրոպական «կանաչ գործարքի» գործողությունների ծրագրից մինչև հունիսին Եվրախորհրդարանի ընտրությունների համար քաղաքական մրցավազքի մեկնարկ, հացահատիկի համաշխարհային գների աճից մինչև դիզվառելիքի թանկացում:

Նախ՝ փոքր-ինչ մանրամասն անդրադառնանք «կանաչ գործարքին»: Եվրահանձնաժողովը 2019 թվականի դեկտեմբերի 11-ին ընդունել է Եվրոպական «կանաչ գործարքի» (EGD) գործողությունների ծրագիրը, որի հիմնական նպատակն է մինչև 2050 թվականը անցում կատարել դեպի կլիմայական չեզոք Եվրոպա: Կլիմայական չեզոքությունը զարգացման ուղի է, որի դեպքում ջերմոցային գազերի արտանետումները հավասարվում են դրանց կլանմանը, և տնտեսական աճը չի կապվում օգտագործվող ռեսուրսների ավելացման հետ[1]: «Կանաչ գործարքը» պարզապես բնապահպանական ռազմավարություն չէ, այլ համաշխարհային ծրագիր, որն ընդգրկում է բնապահպանության, կլիմայի փոփոխության առաջացրած տնտեսական և սոցիալական հիմնախնդիրները, ինչպես նաև կենսաբազմազանության կորստի կանխարգելումը[2]: Ծրագրի նպատակն է արմատապես փոխել ԵՄ-ի կողմից ռեսուրսների արտադրության, սպառման և արդյունահանման եղանակը՝ հիմքում դնելով կայուն զարգացման և սոցիալական արդարության սկզբունքները: «Կանաչ անցումը», որը «կանաչ գործարքի» ծրագրի առանցքում է, նպատակ ունի կտրուկ կերպով նվազեցնելու ջերմոցային գազերի արտանետումները, բարձրացնելու էներգաարդյունավետության մակարդակը և խրախուսելու վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը: Այս ամենի արդյունքում կարելի է հասնել ոչ միայն կլիմայի փոփոխության հետևանքների մեղմմանը, այլև տնտեսական նոր հնարավորությունների ստեղծմանը, կայուն զարգացման գիտելիքահենք ներդրումների ներգրավմանը և բնակչության կյանքի որակի բարելավմանը:

Անցումը բնապահպանությանը արմատական փոփոխություն է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների նկատմամբ մարդկանց մոտեցման մեջ: Դա փոխակերպման գործընթաց է, որն ուղղված է կայուն զարգացման մոդելի ներդրմանը, ըստ որի՝ մեծ ուշադրություն պետք է դարձվի այն բոլոր ռեսուրսների պատասխանատու և արդյունավետ կառավարմանը, որոնք մեզ տալիս է մոլորակը: Այսինքն՝ նախատեսվում է սահմանափակել մարդու գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, նվազեցնել չվերականգնվող ռեսուրսների շահագործումը և խթանել էներգիայի մաքուր և անսպառ աղբյուրների օգտագործումը:

Ինչպես նկատեցինք, Եվրամիության ֆերմերների դժգոհության գլխավոր պատճառն ագրարային քաղաքականության մեջ նախատեսվող փոփոխություններն են: Բայց, դրա հետ մեկտեղ, յուրաքանչյուր երկիր ունի իր անհանգստությունների

[1] Фермерские протесты нанесли огромный урон экономике европейских стран, https://ren.tv/longread/1198176-fermerskie-protesty-okhvatili-zapadnye-strany

[2] https://www.agenzianova.com/ru/news/il-green-deal-europeo-gli-obiettivi/

առանձնահատուկ շրջանակը, որին շատ համառոտ կանդրադառնանք ստորև:

Գերմանիա: Վերջին 20 տարիների ընթացքում եվրոպացի ֆերմերներն աչքի են ընկնում իրենց ըմբոստ տրամադրվածությամբ՝ արժանիորեն հռչակվելով որպես քաղաքականապես ամենաակտիվ սոցիալական շերտ: Այդուհանդերձ, Գերմանիայի ֆերմերներն իրենց հարևանների, օրինակ՝ Ֆրանսիայի, Նիդերլանդների կամ Լեհաստանի ֆերմերների համեմատ միշտ էլ համարվել են ավելի հանգիստ և օրինապաշտ: Ինչո՞ւ այս անգամ լցվեց հենց նրանց համբերության բաժակը, և գերմանացիները հունվարի 8-ին 5000 տրակտորով և ավելի քան 30 հազար բողոքավորով «գրավեցին» երկրի խոշորագույն քաղաքների, այդ թվում՝ Բեռլինի փողոցները:

«Կանաչ գործարքը» նախատեսում է տարբեր միջոցառումներ՝ հիմնված որոշակի պահանջների վրա: Մասնավորապես՝ շրջանաձև տնտեսության և կենսաբազմազանության վերաբերյալ առկա է «Ֆերմերից մինչև պատառաքաղ» կամ «Դաշտից մինչև սպառող» ռազմավարությունը: Դրանց իրականացման դեպքում ֆերմերները մտավախություն ունեն, որ թունաքիմիկատների օգտագործումը կկրճատվի մինչև 50%-ով, իսկ հանքային պարարտանյութերինը՝ 20%-ով: Ավելին, նախատեսվում է գյուղատնտեսական հողերի մեկ քառորդն օգտագործել օրգանական արտադրանքի աճեցման համար: Դրա հետ մեկտեղ, մինչև 2050 թվականը Եվրոպայում մսի և կաթի արտադրությունը պետք է նվազի 50 տոկոսով[3]: «Այս դեպքում մարդիկ հասկանում են, որ կկորցնեն շահույթը: Քանի որ ավելի հեշտ է անել այն, ինչին սովոր են, քան դիմել բազմաթիվ անորոշություններով լի փոփոխությունների: Բայց մեզ անհրաժեշտ են այս փոփոխությունները, եթե ցանկանում ենք գոյատևել այս մոլորակի վրա»,- պնդում են «կանաչ գործարքի» կողմնակիցները[4]:

Քաղաքացիական անհնազանդության անմիջական պատճառը ֆերմերներին 2,5 միլիարդ եվրոյի չափով լրահատկացման (սուբսիդայի) մերժումն էր: Իշխող կոալիցիան անցյալ տարեվերջին բախվեց ծանր ֆինանսական իրավիճակի, երբ դատարանն արգելեց բյուջեի պակասուրդի համար հատուկ իրավունքների օգտագործումը: Այս որոշման հետևանքով 2024 թվականի բյուջեում 17 միլիարդ եվրոյի

ՆԿԱՐ 1

Բողոքի ցույց Գերմանիայում

[3] https://ren.tv/longread/1198176-fermerskie-protesty-okhvatili-zapadnye-strany

[4] Поляки протестуют не против украинского зерна: почему им так не нравится Зеленый курс ЕС, https://24tv.ua/economy/ru/evropejskij-zelenyj-kurs-pochemu-fermery-protiv-nego-protestujut_n2529585

ճեղքվածք առաջացավ: Գերմանիայի կառավարությունը, ի թիվս այլ միջոցների, որոշեց պակասեցնել ծախսերը՝ կրճատելով գյուղացիական տնտեսությունների սուբսիդավորումը: Երկրի խորհրդարանում այս որոշումը լուրջ դիմադրության չարժանացավ, քանի որ երեք խոշոր կուսակցություններից առնվազն երկուսը համամիտ էր գյուղատնտեսության ոլորտի աջակցության կրճատմանը: Մասնավորապես՝ կանաչները չեն համակրում ֆերմերներին՝ նրանց համարելով շրջակա միջավայրի աղտոտման աղբյուր, իսկ ազատ դեմոկրատները սկզբունքորեն չեն ընդունում սուբսիդավորման գաղափարը: Որպես կանոն, վերջիններս հանդես են գալիս խնայողության ռեժիմի և մասնավոր հատվածի գործունեությանը կառավարության նվազագույն մասնակցության օգտին:

Ակնկալվում է, որ 2024 թվականին ֆերմերները նախ և առաջ կզրկվեն արտոնյալ գնով դիզվառելիք ձեռք բերելու հնարավորությունից: Այժմ յուրաքանչյուր մեկ լիտր դիզվառելիքի դիմաց, որը հունվարին արժեցել է մոտ 1,72 եվրո, կառավարությունը նրանց է վերադարձնում 21 եվրոցենտ:

Ֆրանսիա: Ֆրանսիայում բողոքի մշակույթը շատ ավելի է զարգացած. քաղաքացիներն իրենց դժգոհությունն են հայտնում ամեն մի հարմար առիթով: Ֆերմերներն էլ, այս առումով, բացառություն չեն. կառավարական շենքերի մոտ գոմաղբ թափելը վերջին տարիների միտումն է: Այնուամենայնիվ, 2024 թվականի հունվարին տեղի ունեցած բողոքի ցույցն ամենահուժկուն էր նորագույն պատմության մեջ: Ֆրանսիացի ֆերմերները, որոնք շրջափակել էին Փարիզը, պատրաստ էին միավորվելու իրենց բելգիացի գործընկերների հետ՝ միասին մեկնելու Բրյուսել և ճնշում գործադրելու Եվրահանձնաժողովի նիստի վրա: Ինչը դուր չի գալիս ֆրանսիացիներին: Նախ՝ ինչպես Գերմանիայում, այստեղ ևս կառավարությունը որոշել է սահմանափակել լրահատկացումները (իսկ Ֆրանսիայում դրանք ամենամեծն են աշխարհում՝ տարեկան մոտ 9 միլիարդ եվրո): Երկրորդ՝ ֆերմերները դժգոհ են եկամտի անկումից և, ինչպես իրենք են կարծում, այլ երկրների արտադրողների հետ անբարեխիղճ մրցակցությունից: Օրինակ՝ Ֆրանսիայի կառավարությունը մշակել է մի ծրագիր, ըստ որի՝ մինչև 2030 թվականը գյուղատնտեսության մեջ թունաքիմիկատների օգտագործումը պետք է կրկնակի կրճատվի, ինչը բացասաբար կանդրադառնա մշակաբույսերի բերքատվության վրա և կբարձրացնի արտադրանքի ինքնարժեքը: Սա այն դեպքում, երբ գյուղատնտեսության նկատմամբ առավել մեղմ պահանջներ ունեցող երկրներից ապրանքների ներմուծումն արգելված չէ, և այդ ապրանքներն ավելի էժան են:

Ցուցարարները դժգոհ են նաև գյուղատնտեսությամբ զբաղվողների ընդհանուր վիճակից: Օրինակ՝ ֆրանսիական ֆերմերային տնտեսությունների 17,4%-ը գտնվում է աղքատության գծից ներքև, որը մոտ երկու անգամ գերազանցում է երկրի միջին ցուցանիշը՝ 9,2%: Երիտասարդներին չի հրապուրում այս ոլորտը. 496 հազար ֆերմերից գրեթե 200 հազարը 2026 թվականին կդառնա թոշակառու, և նրանց տեղը զբաղեցնող գրեթե չկա:

Ներմուծումն այն երրորդ խնդիրն է, որն անհանգստացնում է ֆրանսիական ագրոարդյունաբերական համալիրի աշխատողներին ու ձեռնարկատերերին: ԵՄ-ն վերսկսել է բանակցությունները հարավամերիկյան Mercosur ինտեգրացիոն միավորման հետ ազատ առևտրի շուրջ, և եթե դրանք հաջողեն, Արգենտինայից, Բրազիլիայից և Ուրուգվայից ավելի էժան ապրանքները կհեղեղեն ֆրանսիական շուկան: Ամենայն հավանականությամբ, հազարավոր գյուղացիական տնտեսություններ չեն դիմանա մրցակցությանը և դուրս կգան բիզնեսից: Բացի դրանից, շարունակվում է դժգոհությունն Ուկրաինայից ապրանքների ներկրումից, քանի որ այդ ապրանքներն ավելի էժան են, քան Հարավային Ամերիկայից ներմուծվողները: Վերջապես, մրցակցությունը սուր է նաև ԵՄ ներսում, օրինակ՝ հարևան Իսպանիայի հետ: Հատկապես անհանգստացնող է այն հանգամանքը, որ իսպանական գինիները տիրապետող են դարձել ֆրանսիական վաճառասեղաններին:

Իտալիա: Իտալացի ֆերմերները, որոնք

տրակտորների շարասյունով հեղեղել էին Հռոմի կենտրոնական փողոցները, կոչով դիմել էին կառավարությանը՝ ականջալուր լինելու գյուղատնտեսության ոլորտի բարելավմանը միտված իրենց առաջարկներին: Նրանք իշխանություններին հորդորում էին վերանայել եվրոպական «կանաչ գործարքը», պայքարել անբարեխիղճ մրցակցության և «սինթետիկ սննդամթերքի» տարածման դեմ, ինչպես նաև ճանաչել «Made in Italy» ապրանքանիշի արժեքը[5]: Այս իրողություններից ելնելով՝ Եվրահանձնաժողովը փետրվարի 6-ին չեղյալ հայտարարեց մի շարք՝ նախապես համաձայնեցված բնապահպանական օրենքներ: Մասնավորապես՝ չեղարկվել են թունաքիմիկատների օգտագործման կրճատման ծրագիրը և «Գյուղատնտեսության ոլորտում ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման մասին» օրենքը[6]:

Լեհաստան: Ազատ առևտրի ռեժիմը հանգեցրեց հարևան երկրներ ուկրաինական հացահատիկի մատակարարման կտրուկ աճին, ինչը հարուցեց ֆերմերների բողոքը: Իրավիճակը հատկապես սրվեց 2023 թվականի ապրիլին, երբ ուկրաինական էժան սննդամթերքի մեծածավալ հոսքը նպաստեց տեղական շուկայի գերհագեցմանը և գների իջեցմանը: Լեհաստանը, Հունգարիան և Սլովակիան անմիջապես արգելքներ սահմանեցին ուկրաինական ապրանքների համար, իսկ Ռումինիան և Բուլղարիան համաձայնության եկան լիցենզավորման և հոսքերի վերահսկման վերաբերյալ: Եվրահանձնաժողովն այս արգելքներն անվանել է անընդունելի, քանի որ հակասում է ԵՄ համերաշխության ոգուն: Եվրոպական առաջադեմ 12 երկրների խումբը, ներառյալ Գերմանիան, Ֆրանսիան, Նիդերլանդները և Բելգիան, հայտարարեց, որ միասնական շուկայի ամբողջականությունը վտանգի տակ է: Ֆերմերների դժգոհությունը սպառնում է խաթարել ԵՄ համերաշխությունը և կորցնել գյուղական համայնքների ձայները, որոնք վճռական են տրամադրված հունիսին կայանալիք ԵՄ ընտրությունների առումով: Եվրահանձնաժողովն ընդունել է միջանկյալ համաձայնագիր, որը թույլ է տալիս ուկրաինական չորս ապրանք՝ ցորեն, եգիպտացորեն, հլածուկի սերմեր և արևածաղիկ, ԵՄ հարևան երկրների միջոցով տարանցիկ փոխադրել արտաքին շուկաներ: Այս պայմանավորվածության

ՆԿԱՐ 2

Լեհ ֆերմերները տրակտորներով փակել են Ուկրաինայից ներմուծվող հացահատիկի ճանապարհը

[5] Итальянские фермеры требуют перестать поддерживать Украину; https://m.vk.com/wall-61706629_3633316

[6] В Италии разгораются протесты фермеров; https://rossaprimavera.ru/news/fd0c5486https://rossaprimavera.ru/news/fd0c5486

ժամկետն ավարտվել է սեպտեմբերին: Ընդ որում, Լեհաստանը, Հունգարիան և Սլովակիան պահպանել են ազգային արգելքները, բայց Ուկրաինան շարունակում է իր ապրանքները տարանցիկ տեղափոխել սահմանով: Այդ փաստն առաջացրել է ֆերմերների համալեհական բողոք, որը սկսվել է ս.թ. փետրվարի 9-ին, երբ տրակտորներով արգելափակվել են Ուկրաինայի հետ սահմանի՝ դեպի անցակետեր տանող ճանապարհները: Փետրվարի 27-ին տեղի է ունեցել գյուղատնտեսական արհմիությունների կողմից կազմակերպված «Երթ դեպի Վարշավա», որին մասնակցել են տասնյակ հազարավոր ֆերմերներ: Նրանք պահանջել են դադարեցնել Ուկրաինայի գյուղատնտեսական ապրանքների անվերահսկելի մուտքը Լեհաստան՝ հրաժարվելով Եվրամիության «կանաչ գործարքի» բնապահպանական պահանջներից:

Լեհաստանի վարչապետ Դոնալդ Տուսկը՝ Եվրամիության հավատարիմ աջակիցը և նույնիսկ նրա նախկին «առաջին դեմքը» (2014-2019 թվականներին եղել է Եվրոպական խորհրդի նախագահը), պաշտպանում է լեհ ֆերմերների շահերը: Նա «անխոհեմ» է անվանում ԵՄ որոշումը «Ուկրաինայի համար խոչընդոտները վերացնելու մասին» և հայտարարում, որ Լեհաստանը ցանկանում է օգնել Ուկրաինային, սակայն այդ աջակցությունը չպետք է լինի լեհ ֆերմերների շահերի հաշվին: «Եվրոպայում դժվար է գտնել ավելի ուկրաինամետ քաղաքական գործիչ, քան ես եմ և ավելի ուկրաինամետ ազգ, քան լեհերը, բայց մենք պետք է հաշվի առնենք նաև Լեհաստանի և Եվրոպայի պարենային շահերը: Այդ իսկ պատճառով ես ցանկանում եմ խոսել նաև մեր ֆերմերների և նրանց անվտանգության մասին»,- ասել է Տուսկը[7]:

Ռումինիայում ֆերմերներն ու փոխադրողները դժգոհ են կառավարության ձեռնարկած միջոցառումներից: Նրանց կարծիքով՝ այն մարդիկ, որոնք բանակցել են կառավարության հետ և պայմանավորվել որոշ հարցերի շուրջ, իրենց ներկայացուցիչները չեն: Միաժամանակ, ուսերը կապելով սև պարաններով, նրանք փորձել են պատկերել գյուղատնտեսության ոլորտի մահը:

Հունաստանում ֆերմերները բողոքում են արտադրության բարձր ծախսերից և փոխհատուցման ցածր վճարումներից: Լարիսայի և Կարդիցայի ֆերմերները փորձել են փակել տրակտորների շարժը հանրապետական ճանապարհով: Կարդիցայում ֆերմերները ճեղքել են ոստիկանական պատնեշները ոչ թե տրակտորներով, այլ ոտքով՝ ստիպելով իշխանություններին դադարեցնել երթևեկությունը E65 մայրուղով:

Ֆերմերները ավելի մեծ փոխհատուցում են պահանջում բնական աղետների, հիվանդությունների և վնասատուների պատճառով բերքի կորստի, ինչպես նաև գյուղատնտեսությունը բնական վտանգավոր երևույթներից պաշտպանելու նպատակով ստեղծվող նոր ենթակառուցվածքների համար:

Եզրակացություն: Ինչպես տեսնում ենք, ԵՄ՝ նույնիսկ ամենաապահով ու բարվոք երկրներում, որտեղ, շնորհիվ միացյալ ագրարային քաղաքականության, նպաստավոր պայմաններ են ստեղծվել գյուղատնտեսության զարգացման համար, ագրարային ոլորտը զերծ չէ արտաքին ու ներքին ռիսկերից: Հետևաբար՝ բոլոր դեպքերում միջպետական փոխհարաբերություններում անհրաժեշտ է կարևորել ազգային շահի պահպանման և ինտեգրացման գործընթացում «անվտանգության բարձիկների» անխափան օգտագործման սկզբունքները: Որոշակի իրավիճակներում, որպես այդպիսիք, հանդես են գալիս շուկայի կարգավորման և պետական լրավճարների հատկացման գործիքները:

[7] https://www.currenttime.tv/a/kuda-ehalo-ukrainskoe-zerno-kotoroe-polskie-fermery-vysypali-na-granitse/32816849.html

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Фермерские протесты нанесли огромный урон экономике европейских стран, https://ren.tv/longread/1198176-fermerskie-protesty-okhvatili-zapadnye-strany
2. Что движет аграриями Европы, вышедшими на демонстрации против политики ЕС? https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/chto-dvizhet-agrariyami-evropy-vyshedshimi-na-demonstratsii-protiv-politiki-es/
3. Кто платит за экологическую политику: фермеры против «зеленого» курса, https://www.imemo.ru/publications/policy-briefs/text/who-pays-for-environmental-policy-farmers-against-the-green-deal
4. Какие перемены должны произойти в аграрном секторе? https://www.eurotopics.net/ru/314130/%D0%BA
5. Поляки протестуют не против украинского зерна: почему им так не нравится Зеленый курс ЕС, https://24tv.ua/economy/ru/evropejskij-zelenyj-kurs-pochemu-fermery-protiv-nego-protestujut_n2529585https://24tv.ua/economy/ru/evropejskij-zelenyj-kurs-pochemu-fermery-protiv-nego-protestujut_n2529585
6. По всей Европе уже несколько месяцев протестуют фермеры, https://lisa.md/po-vsej-evrope-uzhe-neskolko-mesyacev-protestuyut-fermery/
7. Итальянские фермеры требуют перестать поддерживать Украину, https://m.vk.com/wall-61706629_3633316
8. В Италии разгораются протесты фермеров, https://rossaprimavera.ru/news/fd0c5486https://rossaprimavera.ru/news/fd0c5486
9. Куда ехало украинское зерно, которое польские фермеры высыпали на границе, – и продолжится ли блокировка фур из Украины, https://www.currenttime.tv/a/kuda-ehalo-ukrainskoe-zerno-kotoroe-polskie-fermery-vysypali-na-granitse/32816849.html

Самвел АВЕТИСЯН
Старший эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ, доктор экономических наук, профессор

РЫНКИ И КОНКУРЕНЦИЯ

ПОЧЕМУ ПРОТЕСТУЮТ ФЕРМЕРЫ ЕВРОПЫ? ПРИЧИНЫ И ПОСЛЕДСТВИЯ

Для фермеров большинства стран Евросоюза 2024 год начался с недовольства. Уже с января фермеры Германии, Франции и Польши подняли волну протеста, к которой позже присоединились и другие страны. Причиной тому стала импортируемая на льготных условиях сельскохозяйственная продукция из Украины и Латинской Америки, а главной причиной стала «зеленая сделка», принятая ЕС. Еще 11 декабря 2019 года Европейская комиссия приняла план действий «Европейский зеленый курс» (EGD), основной целью которого является переход к климатической нейтральности к 2050 году. То есть, среди прочего, достичь такого рубежа, чтобы выбросы парниковых газов были равны их поглощению природными экосистемами, а экономический рост больше не был связан с увеличением используемых ресурсов. Однако спектр требований фермеров в некоторых странах шире.

В Республике Армения активизируется процесс сближения с Европейским Союзом, поэтому важно наблюдать за социально-экономическими процессами, разворачивающимися в странах ЕС, многогранно.

Ключевые слова: *фермеры, недовольство, «Зеленый курс», импортные льготы, государственная поддержка*

Samvel AVETISYAN
Senior Expert at «Amberd» Research Center, ASUE,
Doctor of Economic Sciences, Professor

MARKETS AND COMPETITION

WHY ARE EUROPEAN FARMERS PROTESTING? CAUSES AND CONSEQUENCES

For farmers in most EU countries, 2024 began with complaints. Since January, farmers in Germany, France, and Poland have started a wave of protest, which later spread to other countries. The cause of this unrest was the import of agricultural products on preferential terms from Ukraine and Latin America, with the main reason being the "green deal" adopted by the EU.

Back on December 11, 2019, the European Commission introduced the European Green Deal (EGD) action plan, aiming for climate neutrality by 2050. That is, among other things, to reach a point at which greenhouse gas emissions are equal to their absorption by natural ecosystems, and economic growth is no longer associated with increased resource use. However, the range of demands from farmers in some countries extends beyond this issue,

The process of rapprochement with the European Union in the Republic of Armenia is becoming more and more active, therefore it is important to observe the socio-economic dynamics unfolding in EU countries from a multifaceted perspective.

Keywords: *farmers, discontent, Green Deal, import incentives, government support*